«ՍԳԿԿ» ԻԿԿ Կարգապահական հանձնաժողովի նիստի

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 56/03

ք. Երևան,Արշակունյաց 5.417 սենյակ 07.02.2020թ. ժամը 16:10

Համաձայն «ՍԳԿԿ» ԻԿԿ-ում 08.01.2020թ-ին ստացված, «Էյչ-Էս Բի Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ի ներկայացուցիչ՝Անի Համբարձումյանի դիմում- բողոքի հետագա ընթացքը ապահովելու նպատակով `«ԱԼՏԷ» ՓԲ ընկերության սնանկության գործով կառավարիչ՝ Վահագն Ավագյանի գործողությունների /անգործության/ փաստերի նկատմամբ,վերահսկողության գործառույթի պատշաճ իրականացման նպատակով, կառավարչի վարքագծի վերաբերյալ կարգապահական վարույթ հարուցելու և դիմումում արծածված հանգամանքների վերաբերյալ պարզաբանումներ ստանալու համար՝ **ս/թ-ի Փետրվարի 07-ին,16-00-ին** ՝ ք.Երևան, Արշակունյաց 5 հասցեում, հրավիրվել էր «ՍԳԿԿ» ԻԿԿ Կարգապահական հանձնաժողովի նիստը:

«ՍԳԿԿ» ԻԿԿ Կարգապահական հանձնաժողովի նիստին.

ԾԱՆՈՒՑՎԱԾ ԷԻՆ՝
Հանձնաժողովի անդամ՝ Հարություն Գևորգյանը
Հանձանժողովի անդամ՝ Արմենակ Աղամյանը
Հանձանժողովի անդամ՝ Ռուբեն Խալաթյանը
Հանձանժողովի անդամ՝ Արմինե Մովսիսյանը
Դիմումատու՝«Էյչ-Էս Բի Սի Բանկ Հայաստան»ՓԲԸ-ի ներկայացուցիչ՝Անի Համբարձումյանը
«ԱԼՏԷ» ՓԲ ընկերության սնանկության գործով կառավարիչ՝ Վահագն Ավագյանը

ՍԱՄՆԱԿՑԵՑԻՆ՝
Հանձնաժողովի Նախագահ՝ Տիգրան Հարությունյանը
Հանձնաժողովի անդամ՝Արմինե Մովսիսյանը
Հանձանժողովի անդամ՝ Ռուբեն Խալաթյանը
Հանձանժողովի անդամ՝ Արմենակ Աղամյանը

«ԱԼՏԷ» ՓԲ ընկերության սնանկության գործով կառավարիչ՝ Վահագն Ավագյան լիազոր ներկայացուցիչ՝Արտակ Ալոյանը:
Դիմումատու՝«Էյչ-Էս Բի Սի Բանկ Հայաստան»ՓԲԸ-ի ներկայացուցիչ՝Անի Համբարձումյանը

ՕՐԱԿԱՐԿՈՒՄ՝
1. «ՍԳԿԿ» ԻԿԿ-ում 08.01.2020թ-ին ստացված, «Էյչ-Էս Բի Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ի ներկայացուցիչ՝Անի Համբարձումյանի դիմում- բողոքի հետագա ընթացքը ապահովելու նպատակով ՝ «ԱԼՏԷ» ՓԲ ընկերության սնանկության գործով կառավարիչ՝ Վահագն Ավագյանի գործողությունների /անգործության/ փաստերի նկատմամբ, վերահսկողության գործառույթի պատշաճ իրականացման, բողոքում նշված փաստական հանգամանքների քննության և սնանկության գործով կառավարչի վարքագծի վերաբերյալ, կարգապահական վարույթ հարուցելու հարցը:

ԼՍԵՑԻՆ-Կարգապահական Հանձնաժողովի նախագահ Տիգրան Հարությունյանը ստուգելով ներկաների լիազորությունները և անձը հաստատող փաստաթղթերը բացեց նիստը և տեղեկացրեց նիստի մասնակիցների վերաբերյալ առ այն,որ «ԱԼՏԷ» ՓԲ ընկերության սնանկության գործով կառավարիչ՝ Վահագն Ավագյանին Կարգապահական հանձնաժողովում ներկայացնում է լիազորված ներկայացուցիչ,ինչը սնանկության գործով

կառավարչի որպես կարգապահական վարույթի մասնակցի իրավունքն է և համապատասխանում է «Կարգապահական հանձնաժողովի գործունեության և սնանկության գործերով կառավարչի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման Կարգի» 3.2 հոդվածի 1-ի մասին:

ԼՍԵՑԻՆ-Կարգապահական Հանձնաժողովի նախագահ Տիգրան Հարությունյանը՝ «Կարգապահական հանձնաժողովի գործունեության և սնանկության գործերով կառավարչի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման Կարգի» 4.6 հոդվածի կարգով դիմում-բողոքը ներկայացնելու համար ծայնի իրավունք տվեց դիմումատու «Էյչ-Էս Բի Սի Բանկ Հայաստան»ՓԲԸ-ի ներկայացուցիչ՝Անի Համբարձումյանին,ով հակիրճ ներկայացնելով դիմում բողոքը մասնավորապես նշեց,որ սնանկության գործով կառավարիչ Վահագն Ավագյանի կողմից կեղծվել է լիազորագիրը,որը պարտապանի կողմից ներկայացվել է դատարան,որպիսի փաստի վերաբերյալ էլ հարուցվել է քրեական գործ և կառավարչի անօրինական գործողությունների համար խնդրում է կառավարչին ենթարկել համապատասխան տուժի:Դիմումատուն ներկայացրեց նաև դիմումին կից իր ապացույցները մասնավորապես 04.10.2019թ-ի քրեական գործով որոշումը՝ 8 թերթից:

Հանձնաժողովի անդամ՝Ռ.Խալաթյանը ուսումնասիրելով ներկայացված որոշման լուսապատճենը հարց ուղղեց դիմումատուին թե ինչ կապ ունի սնանկության գործով կառավարիչը այս քրեական գործի հետ,քանի որ այս գործում նա ընդհամենը վկայի կարգավիճակ է ունեցել:

Դիմումատուն պատասխանեց,որ քրեական գործով ապացուցվել է որ կառավարչի տված լիազորագիրը եղել է կեղծ քանի որ այն տրվել է հետին ամսաթվով:

Կանոնակարգի համաձայն իր դիրքորոշումը և բացատրություններ ներկայացնելու համար ձայնի իրավունք տրվեց՝«ԱԼՏԷ» ՓԲ ընկերության սնանկության գործով կառավարիչ՝ Վահագն Ավագյանի լիազորված ներկայացուցիչ Ա.Ալոյանին, ով ներկայացրեց հանձնաժողովին 16.01.2020թ-ի ՀՀ Սնանկության դատարանի ԵԿԴ/0009/04/14 որոշումը և խնդրեց հաշվի առնելով նույնաբովանդակ միջնորդության վերաբերյալ դատարանի դիրքորոշումը,մերժել դիմում- բողոքի հիմով կարգապահական վարույթի հարուցումը:

Ներկայացուցիչը նշեց նաև ,որ դիմումատուի ներկայացված քրեական գործի որոշմամաբ պարզ երևում է,որ քննիչի կողմից ստուգվել են ներկայացրած փաստերը և քրեական գործի վարույթը կարճվել է,հանցակազմի բացակայության հիմքով:

Հանձնաժողովի անդամ՝Ա.Ադամյանը ուսումնասիրելով ներկայացված որոշումը հայտնեց այն կարծիքը,որ այո որոշմամբ դատարանը անդրադարձել է նույնաբովանդակ միջնորդությանը և մասնավորապես քրեական գործի շրջանակներում պարզված հանգամանքներին և գտել է որ բավարար հիմք չկա միջնորդության բավարարման համար:Նշված հիմերով դատարանը որոշել է միջնորդությունը թողնել առանց քննության:

Հանձնաժողովի անդամի կարծիքով դիմում բողոքում նույնպես չկան հիմքեր կառավարչի նկատմամբ կարգապահական վարույթի հարուցման համար և առաջարկեց մերժել կարգապահական վարույթի հարուցումը,դրա հարուցման հիմքերի բացակայության պատճառաբանությամբ:

Հանձնաժողովի նախագահ՝Տ.Հարությունյանը հայտնեց այն կարծիքը,որ համաձայն «Կարգապահական հանձնաժողովի գործունեության և սնանկության գործերով կառավարչի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման Կարգի» 4.12 հոդվածի.

-Կառավարչի նկատմամբ կարգապահական վարույթը կարող է հարուցվել կարգապահական պատասխանատվության հիմք հայտնաբերվելուց հետո՝վեցամսյա ժամկետում,բայց ոչ ուշ,քան հիմքը ծագելուց մեկ տարի հետո:Սույն մասում նշված ժամկետներն անցնելուց հետո կարգապահական վարույթը չի կարող հարուցվել,իսկ հարուցված վարույթը ենթակա է կարճման:

Քանի որ դիմում-բողոքում ներկայացված փաստական հանգամանքները վերաբերվում են հիմնականում պարտապանի տնորենի գործողություններին և դրանց իրավական գնահատականներին,իսկ կառավարչին վերաբերվող մասը հիմնականում դիմումատուի

կողմից կատարված եզրակացություններ և իր անձնական գնահատականներն են ու փաստեր չեն պարունակում ուստի վերընշված հիմքով Հանձնաժողովի նախագահն առաջարկեց մերժել Կարգապահական վարույթի հարուցումը:

Հանձնաժողովի մյուս անդամները համակարծիք եղան առաջարկին և քվեարկեցին՝

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ՝

Կողմ - 4

Դեմ – 0

Ձեռնպահ – 0

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ՝

1. «ՍԳԿԿ» ԻԿԿ-ում 08.01.2020թ-ին ստացված, «Էյչ-Էս Բի Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ի ներկայացուցիչ՝Անի Համբարձումյանի դիմում- բողոքի հետագա ընթացքը ապահովելու նպատակով,«ԱԼՏԷ» ՓԲ ընկերության սնանկության գործով կառավարիչ՝ Վահագն Ավագյանի գործողությունները /անգործություն/ օրենքին և կանոնակարգերին համապատասխանության վերաբերյալ կարգապահական վարույթի հարուցումը «Կարգապահական հանձնաժողովի գործունեության և սնանկության գործով կառավարչի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման» կարգի 4.12. հոդվածի հիմքով մերժել,կարգապահական վարույթի հարուցման հիմքերի՝փաստական հանգամանքների բացակայության հիմքով:

Ներկայացված դիմումը և կից փաստաթղթերը կցել գործին:

2.Սույն Եզրակացությունը սահմանված ժամկետում ներկայացնել Դիտորդ Խորհրդին՝ հետագա որոշում կայացնելու նկատառումով:

Հանձնաժողովի Նախագահ՝ Տ.Հարությունյան

Հանձնաժողովի անդամ՝ Ա.Աղամյան

Հանձնաժողովի անդամ՝ Ռ.Խալաթյան

Հանձնաժողովի անդամ՝Ա.Մովսիսյան